

Ապետիք ուսման մէջ շատ փայլուն յաջողութիւններ ունեցաւ: Իր վերջնական քննութիւնները մեծ հանգիստաւորութեամբ կատարեց եօթը ականաւոր ծիրանաւորներէ կազմուած յանձնախումբի մը առջեւ, որոնցմէ էին Փրեզերիկոս Սֆորցա, Ֆլաւիանոս Քիճի, Յուլիոս Ռոսիլիոզի որ յետոյ քահանայապետ ընտրուեցաւ Կղեմէս Թանունով:

Քննութիւնները այնքան յաջող անցան որ բոլոր քննիչները փայլուն ապագայ մը կը գուշակէին իրեն, իսկ ապագայ պապը՝ մինչեւ իսկ ծիրանաւորութեան աստիճանի մասին կը խօսէր:

Ասկէ վերջ Ապետիք աստուածաբանութեան ընթացքին նուիրուեցաւ, ասոր մէջ ալ իր վարժապետներուն գնահատանքին ու մինչեւ իսկ հիացումին արժանանալով:

Եկեղեցական հանգիստ պաշտօն մը կը սպասէր իրեն Հռոմի մէջ: Ինքը սակայն տարիներու յառաջացումով, կեանքի ծանր հարցերու առջեւ կը գտնէր ինքզինքը: Մանկութենէն ի վեր գործունէութեան, շարժումի ու կեանքի պայքարին վարժած՝ չէր կրնար իր հոգին համակերպել այն մտածութեան որ կեանքը անցընէ հանգստի մէջ՝ հեռու ազգերու գիւնադիտական կուռի

ասպարէզէն: Ան վառ պահած էր իր ծրագիրն ապատակը, որ միշտ աւելի կ'արծարծէր ուսումով և վճռական կէտի առջեւ գտնուող աստուածաբանը կը մղէր վերջնական կերպով թողուլ Հռոմի գործունէութիւնը, գիտութիւնն ու կարողութիւնները իրենց բոլոր ուժով՝ գործածելու ի նպաստ Արեւելեան և Արեւմտեան քրիստոնէութեան, ստանձնելով գծուարութիւններ, վիշտ և յոգնութիւն: Այս գաղափարական էր ուրեմն որ Ապետիքի մէջ կը ճակատէր Հռոմի մէջ պաշտօն մը վարելու կարելիութեան դէմ:

Ապետիք վերջապէս որոշումը տուաւ. պիտի չձեռնադրուէր, այլ իր գործունէութիւնը պիտի նուիրէր թրքական իշխանութեան խորտակումին: Իր լեզուագիտութիւնը, ծանօթութիւններն ու կորովը զինքը կը նախասահմանէին միջնորդ ըլլալու ընդմէջ ետրպագի և արեւելցի խալիֆայի քննաւիճակներու: Իր անհանգիստ բնաւորութիւնն ալ աւելի այս ասպարէզին կը հակէր: Իրապէս, քիչ վերջ, կը գտնենք զինքը Կղեմէս Թէն պարսիկ Շահին զրկուած պատուիրակութեան մէջ:

Թրգմ. Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԳԻՒՂԻՆ ՀՈՎԻԿԸ

Անտաններէն միշտ կու գայ մեր գիւղին հովը թռչնիկ,
Ինչպէս հովիւ մը մատաղ թռթովելով իր սրինգ.
Եւ կը տանի գիւղէ գիւղ հառաչանքներ սրտերու
Որոնք զերար կը սիրեն և կը մընան միշտ հեռու:

Կը բարձրանան ցորեններն ալիքի պէս հեռաւոր
Մըմլելով իրարու հօտաղներու երգն աղուոր.
Ծաղկած թուփերն ալ կը զգան Վարդապառի ալքերիւն
Երազելով օրերն հեշտ աղջիկներու պարերուն:

Կը նըւագէ գոնէ դուռ աշուղներու հետ գիւղին
Սարերու երգն հովուական և հարսերու Անտանին,
Իր մատներով կը բախէ պատուհանէ պատուհան
Ինչպէս կապոյտ աղաւնի արեւու շողն իր բերան:

Եւ ինքն է միշտ աննիւթ ծով թռչուններուն նորաթեւ,
Որոնք ուրախ կը սահին նաւակներու պէս թեթեւ.
Թեւերն իրենց կը թռչին առագաստներ բազմերանգ
Եւ օդին մէջ ծիրանի, և երկնքի երազանք:

Ո՛րքան թառիլ կը սիրէ հովիկն հանգարտ ծառերուն,
Կանանչ տերեւն իր վրան և կուրծքին տակ տաքուկ բոյն,
Թռչուններուն պէս փոքրիկ գունեան փետուր ունենալ
Եւ արտոյտին հետ երգել արշալոյսներ ոսկեփայլ:

Բայց երբ կու գայ հիւսիսէն վարդերն ինչո՞ւ կը սարսին,
Ինչո՞ւ կ'ըսեն թէ չունի սիրոյ անոյշ մեղեդին.
Ո՛հ, նա ըստէպ կը բերէ փերիններու հառաչներ
Որոնց շրթներն արեգակն երբեք կարմիր չի ներկեր:

Ալիքի պէս իր սիրտն ալ կը տենչայ միշտ ջերմ ափունք,
Հորիզոններ ծիրանի և վարդերու հեշտ բուրմունք,
Զէք լըսեր դուք գիւղերներն իր կաղկանձիւնն ողբերգակ
Երբ կը շրջի որբի պէս փնտռելով միշտ արեգակ:

Միշտ մանուկ է մեր հովիկն ու կը սիրէ բաց երկինք,
Քաշել մազերն հարսերու, շոյել դէմքեր գեղեցիկ.
Երբ ճամբուն մէջ կը տեսնէ կին մը ձերմակ քողերով
Քըզանցքն անոր ամպի պէս կը տարտղնէ ժպտելով:

Եւ բուռ մը յարգ իր ձեռքին դարձադարձիկ կը խաղայ
Թիթեռնիկներ կարծելով փոքրիկ շողերն այդ ոսկեայ.
Յանկարծ ժպտուն կը թառի բարտիներու կատարին
Խառնըւելով թեւամոփ թռչուններու երամին:

Բայց երբ ամպի մութ շուքեր կապոյտին մէջ կը շրջին
Թըռիչք՝ կ'առնէ արծուի պէս խոյանալով դէպ' երկին,
Լայն շարժումով թեւերու կալի նըման կը սրբէ
Որ չսպառնան փոթորիկ և կարկուտներ արձիճէ:

Հընչիւններով կը լեցուի փոքրիկ երկինքը գիւղին
Զերդ արծաթեայ երգեհոն կամարներու տակ ժամին.
Դարձեալ թեւերն իր արփին սիրելաբար կը բանայ
Փարելով մեր գիւղերուն ինչպէս նոր հարս ու փեսայ:

Ո՛հ, կը տրտմին մեր գիւղերն առանց արեւ տեսնելու,
Ու կ'ըսեն թէ շողերն են որ կը փոխուին հասկերու.
Յորենն երբեք չի մեծնար առանց հովի օրօրին,
Ոչ թռչունները փոքրիկ գեղգեղանքներ կը սորվին:

Այսպէս ծառերն ալ փոքրիկ պատրանք կը զգան թռչելու
Տեսնել ուրիշ հորիզոն և քաղաքներ տենչերու,
Անտառներէն երբ կու գայ մեր գիւղին հովն երգելով
Սարեր ձորեր կը կապուին, կու գան սրտերն իրար քով:

Հարսը կ'ըսէ հեծեծուն « Տար իմ հովիկ, տար իմ սէրն
Հեռուն լեռներ ու ծովեր, ուր որ իմ սիրտս են կիսեր »:
Սեւ լաշակին տակ այրին գերեզմաններ կը խորհի
Որ ամէն օր լոյսին հետ խաչերու թեւն երկարի:

Կ'երգէ հովիւը սարէն « Ո՛վ հայրենի քաղցր հովիկ
Եկուր նստինք գիւղին դէմ, երգեր հիւսենք գեղեցիկ,
Դուն դաշտ կանչէ և երկինք, հորիզոններ հեռաւոր.
Ես եար կանչեմ խորոտիկ, և օճախի ծուխն ոլոր »:

Փըշէ Հովիկդ իմ անոյշ, անցիր լեռներ ու ծովեր,
Շատ կան հեռուն պանդուխտներ, հայ են անոնց ալ սրտեր.
Տարիներով կը սըգան, օտար երկինքն է միշտ մութ,
Թող գան լըսեն սըրինգներդ, ողջունեն մեր առաւօտ:

Քեմիա, 20 Մարտ 1946.

ԱՆԻԻ ԿԱԹՈՂԻԿԷՆ

Այս հեռաւոր պանդխտութեան մէջ տըխուր,
Ուր կը թըւին օրերը խոր գիշերներ,
Տեսայ պատկերդ մեր հաւատքին պէս մաքուր
Եւ մեր սըրտին մանուկ օրուան գոյնն ունէր:

Գմբէթներուդ երկինքն է միշտ վեհապանծ
Աւելի խոր քան աստղերու աշխարհներ,
Զիս կը յուզէ երբ կը խորհիմ թէ Աստուած՝
Հոն էր բազմած երբոր Մուսան կը ստեղծէր:

Եւ իր ձեռքով քեզ իջեցուց երկընքէն
Մարմարներուդ տալով լոյսի կերպարանք.

Զըսպեց դարերն և արեւն իր ընթացքէն
Որ նիւթանար իր գեղեցիկ երազանք:
Կամարներէդ կ'անցնին ամբողջ գարուններ
Գեղեցկագոյն յիշատակներ տանելով.
Երբեմն եթէ կ'իջնեն կապոյտ ըստուերներ՝
Հին խունկն է որ ետ կը դառնայ կարօտով:

Երբ գմբէթներդ շարականի գանգիւնով
Կը հեռանան հորիզոններ դառնալու,
Կը ստեղծէ լոյսն ալապատրի գոյներով
Խոյակներուդ և սիւներուդ գեղն արու:

Հըպարտութիւնն եթէ երբեք մարմնանար
Խոյանքներէդ պիտի առնէր իր Ոգին.
Բայց դուն արդէն ոչ մարմար ես և ոչ քար
Այլ մաս մը մեր ծիրանեծին երկընքին:

Ո՛րքան կողերդ մըխեն բըրիչ և նիզակ
Անմահութեանդ կը հաւատամ ես այնքան,
Զըհոսեցին իր սուրբ Կողէն ալ վըտակ,
Ու կը հնչեն դեռ փողերն իր Յարութեան:

Արփին ինչպէս կենդանարար իր լոյսով
Մարմին և գոյն կու տայ աննիւթ ամպերուն
Այսպէս կ'ելլէ անմեկնելի հրաշքով
Քու հոգիէդ աւերներուն զօրութիւն:

Կ'ապրի Անին՝ որովհետեւ դուն կ'ապրիս,
Աւելի քան վըսեմ խոհերն Արքային.
Զ'անցնիր երբեք մեր երկընքէն նոր Մայիս
Որ քու դռներդ առանց ձեռքի չըբացուին:

Ո՛չ, չէ լըռած բոմբիւնն հըպարտ գանգերուդ
Ոչ ալ երկինք վերադարձած Զարթիքներ,
Դուն Աստուծոյ յաւերժական սարաւոյթ
Քեզ չեն կրնար վարագուրել փոշիներ:

Եւ դուն ինչպէս բոցեղէն սիւնն հընամեայ
Դեռ կը տանիս ըղմեղ արեւ առ արեւ,
Աշտարակներդ երկինք հասնող հազար ջահ.
Ո՛վ քեզ յիշեց՝ տըւիր երկու բոցէ թեւ:

Արփին ինչպէս երկինքն ոսկի կը լեցնէ
Եւ կը յուսան, և կը սիրեն սերունդներ,
Շողեր ունին քու խաչերդ ալ պողպատէ
Կամրջելու հոգիներուն հոգիներ:

Կը չքանան որմերուդ տակ ոխ ու քէն,
Ինչպէս չըկայ արքայութեան մէջ մախանք.

Աչքն Աստուծոյ քեզ կը նայի երկընքէն
Ընդունելու մեր մարմնացած պաղատանք:

Ոչ, չեն կրնար երբեք աչքերն ու հանճար
Նիւթը բաժնել աննիւթական հաւատքէն,
Քեզ կը բերեն սրտերն ամէն ճանապարհ
Եւ կը դառնան ինչպէս երկնի սեմերէն:

Ո՛հ, երանի՜ ըզքեզ տեսնող աչքերուն,
Երբ ճակատներն որմերուդ տակ կը ծըռին,
Քու խաչերուդ թեւեր կու տայ զօրութիւնն
Որ խեղճ մարդիկ հրեշտակներու միշտ փոխուին:

Կը վերանայ սիրտն հաւատքի կամարով
Հոգին ինչպէս հրեշտակն երկինք կը տանի.
Ո՛ւր կայ այսպէս մարդն ու երկինք իրար քով
Եւ գեղարուեստն արարչութեան մօտ լոյսի:

Ո՛չ, չես լքուած առանց խոնկի և մարդու,
Ամբողջ աշխարհս է քեզ համար շահաստան.
Դեռ պիտի գան դարեր առջեւդ խորհելու
Ինչպէս՝ երկրի և երկնի մէջ Յուշարձան:

Քեմիա, 19 Ապրիլ 1945.

ՇՈՂԻ ՄԸ ԿԵԱՆՔՆ ՈՒՆԵՑԱՐ

Երանի քեզ որ շուտ մեռար, ո՛վ մանկիկ
Առանց աշուն տեսնելու.
Բաւական է ձերմակ շուշան մը փոքրիկ
Մարմինդ ամբողջ ծածկելու:

Ու մօմն ինչպէս՝ լուսամփոփին տակ կ'առնեն
Որ շուքերէն զայն բաժնեն.
Քու վըրադ ալ դըրին սիրոյ թեւերէն
Պահպանելու խաւարէն:

Ոչ մէկ սրտի եղար՝ երբեք պարտական,
Շողի մը կեանքն ունեցար.
Ըզքեզ՝ տանող շողը նոյնն էր արեւուն

Ինչպէս բերած էր աշխարհ:
Քանի՜ մարդիկ վախճանն իրենց լաւ գիտեն
Ինչո՞ւ վըրադ կ'արտասուեն:

Քեմիա, 12 հոկտեմբեր 1946.

Ե Ր Ա Ջ Մ Ը

Երբ տակաւին մանուկ էի
Տեսայ երազ մը սիրուն,
Քօղ մը նրբին կը հիւսէի
Ճաճանչներով աստղերուն:

Եւ բռնեց քօղն երկնէ երկին
Ինչպէս ճերմակ ծիր կաթին,
Աշխարհս նըման էր գըրախտին
Վարդերն երբոր դեռ նոր էին:

Մայր իմ, ըսի, մեկնէ երազս,
Դուն շատ գիտես հին բաներ,
Նարեկացին կը հասկնաս,
Սրմնջելով աղօթքներն:

Մայրիկս ըսաւ « Ո՛վ իմ որդիս,
Արեւու լոյս իմ որդիս,
Քեզի համար արւել հոգիս,
Կեանքիդ լապտերն ըրի զիս:

Դուն պիտի՝ ըլլաս օր մը քերթող,
Եւ երկնային քու մուսան,
Տասներկու հատ աստղեր շողշող,
Փառքիդ պըսակ պիտի՝ ըլլան:

Պիտի՝ հանգուցուի կեանքդ արեւուն
Միշտ արշալոյս ըլլալու,
Պիտի՝ ըլլաս մեր հըպարտութիւնն
Մասինն քով հանգչելու »:

Այդ օրէն շատ յոյսեր անցան,
Անցան երկար տարիներ,
Եղայ սրտի լոկ մուրացկան,
Կըրեցի միշտ տանջանքներ:

Սուտ խօսեցաւ մայրենի գուլթն
Ինձմէ ծածկեց արցունքներն,
Փայլուն կարգաց իմ բախտս անգուլթ,
Եւ պանդուխտի սեւ օրերն:

Ես ձեզ մեկնեմ ճշմարտութիւնն
Հաւատացէք երազին.
Կ'ապրէի ես ազատ թռչուն
Մարդիկ գերի ես ըսին:

Շղթայ զարկին իմ ոտքերուս
Շղթայ զարկին և սըրտիս,
Եւ դեռ պատառն իմ շրթներուս,
Անպատաներ տարին զիս:

Քեմիա, 8 հոկտեմբեր 1946.

Թոյլ չըտըին համբուրելու
Ալիշանի սուրբ ճակատն,
Ոչ վարուժանն ողջունելու
Ոչ Մեծարենց մեղրակաթ:

Գընա՛, ըսին, այս աշխարհէն
Դուն չունիս ազգ և անուն,
Եւ յիշեցի ես թախծօրէն
Երկնային ցանցն աստղերուն:

Անցայ կիզիչ անպատաներ
Հասարակածն ես անցայ,
Հոն թըխադոյն էին դէմքեր
Հովանի փուշը դըժնեայ:

Առուակի տեղ օձերն էին
Իրենց արծաթ տուտերով.
Ամպերու տեղ գեղին փոշին
Մինչ արեւու կուրծքին քով:

Կը մըռնէր առիւծն ազատ,
Կը խանջէր փիղն յաղթանդամ:
Կը փնտռէի ես տուն մ'անզարդ
Սիրտ մը սըրտիս բարեկամ:
Ու տենչանքներս իմ մնացին
Դողդոջ ու կախ երկընքէն,
Չէր սահէր հոն թեւն իսկ թռչնին
Ըստուերի պէս հեռուէն:

Սըւիններու փայլն էր միայն
Սեւ շանթերու հաւասար:
Այս է, ըսին քեզ բնակարան
Եւ գերեզման անպատճառ:
Բացին ճաղերը ճըռնչուն.
Ի՞նչ տըխուր է բանտի ձայնն,
Մինչ սըւիններ երեք կանգուն
Դըրին կեանքիս նեղ սահման:

Ու բաժնըւած ես աշխարհէ՛
Երազ տեսայ այդ գիշեր,
Կը հիւսէի քօղ մ'երկաթէ
Իր մէջը գամ և փուշեր:
Բռնեց անհուն հորիզոններ,
Բռնեց կապոյտն արտաքին,
Մայրըս չըկար որ զայն մեկնէր
Սուտ խօսելով վերջտին:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎԱՆՆԵՍԵԱՆ